ԿՐԹԱԿԱՆ

# ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵ. «ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄՆ Է»

*Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության երկու տարվա աշխատանքի արդյունքները:*

Նախարարի խոսքերով, գերատեսչության գլխավոր ձեռքբերումը համակարգի ապաքաղաքականացումն ու դպրոցական մանդատուրների ծառայության բարեփոխումն է:

«2012 թվականի դեկտեմբերին «Ընդհանուր կրթության մասին» օրենքում փոփոխություններ կատարվեցին մանդատուրների գործառույթներին վերաբերվող կետում: Փոփոխություններն առնչվեցին նրանց պարտավորություններին, իրավասություններին: Փոփոխությունները փաստորեն հանգեցրին մանդատուրների համակարգի նորացմանը, ծագեց նրանց նախապատրաստման, մասնագիտական որակավորման բարձրացման անհրաժեշտություն: Նման փոփոխությունը բարձրացրեց մանդատուրների նկատմամբ պահանջարկը, եւ այսօր ավելի քան 400 դպրոցներից պահանջում են ներդնել մանդատուրների համակարգը: Պահանջարկի բավարարման համար մշակել ենք եռամյա ծրագիր»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

Նրա խոսքերով, մանդատուրների ծառայության բազայի վրա հիմնվել է նաեւ հոգեբանական ծառայություն, որն արդեն գործում է չորս տարածաշրջանում: «Այդ ծառայության ներդրման ցանկություն է հայտնել ավելի քան 700 դպրոց, ուստի մենք ծրագրում ենք ընդլայնել հոգեբանական կենտրոնների ցանցը»,- հայտարարեց նախարարը:

Կրթության նախարարի խոսքերով, համակարգում շարունակվում է քաղաքական շարժառիթներով աշխատանքից ազատված մանկավարժների վերադարձման գործընթացը: «Համակարգի ապաքաղաքականացման գործընթացին նշանակալի օգնություն ցուցաբերեց հատուկ հանձնաժողովը, որն ուսումնասիրում է քաղաքական շարժառիթներով ազատված մանկավարժների ու տնօրենների դիմումները: Հանձնաժողովը, որը կազմված է ոչ կառավարական կազմակերպությունների եւ ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներից, արդեն քննարկել է հազարից ավելի դիմում: Մոտ ժամանակներս հասարակայնությանը կներկայացվի մանրամասն հաշվետվություն»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

Նախարարության երկամյա գործունեության հաշվետվության ներկայացմանը Թամար Սանիկիձեն անդրադարձավ նաեւ մանկավարժների աշխատավարձի հարցին: Նրա խոսքերով, 2016-2017 թվականներին մանկավարժների աշխատավարձը կգերազանցի միջին ցուցանիշը: Նրա խոսքերով, մանկավարժների աշխատավարձի առաջիկա բարձրացումը ծրագրված է 2015 թվականի սեպտեմբերին: Գործընթացը կշարունակվի 2016 թվականի ապրիլին, իսկ 2017 թվականի հունվարին այն վերջնականապես կավարտվի: Նախարարի խոսքերով, ուսուցիչների բազիսային աշխատավարձը 2013 թվականին ավելացել է 70 լարիով: Ինչպես նշեց Թամար Սանիկիձեն, բազիսային աշխատավարձի ավելացումը 100 լարիով ծրագրված է իրականացնել երկու փուլով, եւ արդյունքում՝ այն կավելանա 70 տոկոսով:



Երկամյա հաշվետվությունը ներկայացնելիս՝ Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն խոսեց նաեւ բարձրագույն կրթության մասին: Նրա խոսքերով, գերատեսչության կողմից մշակված ծրագրերի, բուհերի ֆինանսավորման շնորհիվ կտրուկ նվազել է այն ուսանողների թիվը, ում ֆինանսական բարդությունների պատճառով ուսանողի կարգավիճակը կանգնեցվել էր: Միաժամանակ, նախարարի խոսքերով, ծրագրված է մշակել համապատասխան ծրագրեր, որպեսզի ֆինանսավորումը լինի սոցիալապես առավել կողմնորոշված, եւ ուսման վարձը չվճարելու պատճառով ուսանողի կարգավիճակի սառեցում չլինի: «Բնականաբար, մենք հնարավոր ամեն ինչ անում ենք ֆինանսավորմանը առավել սոցիալական կողմնորոշում վերապահելու համար, եւ ես խստորեն հետեւում եմ այդ գործընթացին: Գերատեսչությունը հնարավորինս կօգնի այն ուսանողներին, ովքեր աչքի են ընկնում ակադեմիական բարձր առաջադիմությամբ, որպեսզի նրանց համար ֆինանսական հիմնախնդիրները հասցվեն նվազագույնի»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

**ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԱՊԵՐ

# ՈՐՊԵՍԶԻ ԲԱԶՄԱՆԱՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՆ ԻՐԱՐ ՄԻԱՑՆՈՂ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԸ

*Վրաստանի եւ Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարությունների հովանավորությամբ իրականացվող, վեցամյա պատմություն ունեցող «Վրաստան-Հայաստան հանրակրթական կամուրջներ» համագործակցային ծրագրի շրջանակներում, 49 հոգուց բաղկացած խումբը, որի կազմում էին Թբիլիսիի թիվ, թիվ 118, 119, 120, 167, 132 դպրոցների ուսուցիչներ, սովորողներ, Վրաստանի կրթության եւ գիտության աշխատողների ազատ արհմիության Գլդանիի շրջանային կազմակերպության նախագահ Վիկտորյա Բալավաձեն, կրթության հարցերով փորձագետ, «Թանադգոմա» ոչ պետական կրթական կազմակերպության նախագահ Քեթեւան Աբեսաձեն, եռօրյա այցով գտնվում էր Երեւանում: Հանդիպումը նախաձեռնել ու հովանավորել էր Վրաստանի կրթության եւ գիտության աշխատողների ազատ արհմիությունը:*

Ինչպես միշտ, ծրագիրը հագեցած էր բազմածիր ուսումնակրթական, փորձի փոխանակման, ճանաչողական եւ ժամանցային բովանդակությամբ: Այն սկսվեց Սադախլո-Բագրատաշեն անցակետային սահմանից եւ տեղափոխվեց Իջեւանի կրթահամալիր, հետո՝ Դիլիջանի ազգագրական թանգարան, Սեւան:

Ծրագրի ընթացքում հյուրերը հնարավորություն ունեցան ծանոթանալու կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրերին, դրանց կազմակերպմանը, մասնակցեցին ուսումնական պարապմունքների, քննարկումների: Թիվ 132 դպրոցի տնօրեն Թամարա Մաճարաշվիլին երեւանյան «Սեբաստացի» ռադիոյին տված հարցազրույցում, չթաքցնելով իր հիացմունքը, նշեց. «Ընդամենը մեկ օրում ես եւս շատ բան եմ հասցրել սովորել այստեղ: Գոհ եմ դպրոցի աշակերտների մակարդակից: Կարեւոր է, որ դպրոցն ունի բարեկարգված շենք, դասասենյակներ, բազմազան ուսումնական պարագաներ, այդ թվում՝ ինտերակտիվ գրատախտակներ, որոնցից ազատորեն կարողանում է օգտվել սովորողը: Եվ, ընդհանրապես, համալիրում զգացվում է ստեղծարար մոտեցում»:



Տեսակցության օրերին կազմակերպվեցին Հայաստանի կրթության նախարարության աջակցությամբ իրականացվող «Հանրակրթական Դիջիթեք. թվային միջոցները հանրակրթության արդյունավետ գործիքներ» ամենամյա 7-րդ եւ բնագիտա-տեխնիկական 2-րդ ամենամյա ստուգատեսները, ներկայացվեցին «Բլոգային ուսուցում, դասարանի բլոգը որպես մեդիամիջավայր», «Դասարանական ռադիոն որպես ուսումնական միջոց» ուսումնական նախագծերը:

Երեւանյան այդ կրթահամալիրի «վրացախոսների ակումբը» առանձնակի սիրով էր սպասում եւ ջերմությամբ ընդունեց իր հյուրերին: Հետաքրքիր անցավ բարեկամական երգի-պարի (հայկական, վրացական) ուսուցման ժամը, որին հաջորդեց «Նոր տարին միասին» տոնական ծրագիրը: Համալիրի Մարմարյա սրահում հնչում էին հայկական ու վրացական ազգային, ժողովրդական երգերի սրտաբուխ, զգացմունքային կատարումներ, խանդավառությամբ էին ցուցադրվում կրակոտ ու գեղեցիկ պարերը, որոնք ընթանում էին հանդիսատես-մասնակիցների բուռն ծափերի ներքո: Նախագիծը վերածվել էր անկեղծ բարեկամական ու մշակույթների փոխշփումների իսկական տոնի: Գոհ էին թե՛ հյուրերը, թե՛ հյուրընկալները:

Ձեռնարկման շրջանակում անցկացվեց նաեւ հայ-վրաց «Գամարջոբա» («Բարեւ») նախագծի շնորհանդեսն ու վարպետության դաս, որը վարեց կրթության փորձագետ Քեթեւան Աբեսաձեն:

Հյուրերը շրջեցին երեկոյան Երեւանում, եղան Էջմիածնի Մայր տաճարում ու Զվարթնոցում:

Այցելության վերջին օրը կայացավ մամուլի ասուլիս, որի ժամանակ Վիկտորյա Բալավաձեն նշեց. «Սիրով կմիանանք առաջարկված նախագծերին եւ մտածում ենք նաեւ համատեղ նոր նախագծի շուրջ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների համար, որպեսզի մեր մանկավարժները կարողանան բարելավել իրենց որակավորումը, քանի որ Վրաստանում խրախուսվում են բոլոր տեսակի կրթական փոխակերպական (տրանսֆորմացիոն) նախագծերը: Իսկ եթե պատկերացնենք, որ ապրում եմ քաղաք Երեւանում, ապա իմ երեք դպրոցահասակ երեխաների հետ կսովորեի միայն ձեր կրթահամալիրում՝ որպես ուսուցիչ ու ծնող»:

Ստորագրվեց «Հայ-վրաց հանրակրթական կամուրջներ» ծրագրով նոր համաձայնագիր, որով կողմերը պայմանավորվեցին համագործակցել մի շարք ոլորտներում:

- Շատ կարեւոր է, որ մեր հարաբերությունները լինեն, շարունակվեն ու զարգանան որպես մանկավարժական գործընկերություն, Երեւանում, Թբիլիսիում, անընդհատ մեդիայում...,- ընդգծեց երեւանյան կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը:

Հատկանշական է, որ այս կրթական փոխանակումները գնալով նոր թափ են ստանում ու ավելի է ընդլայնվում համագործակցության շրջանակը հայ եւ վրաց ժողովուրդների մատաղ սերունդների եւ կրթության ոլորտի ներկայացուցիչների միջեւ: Մեր ցանկությունն է, որ սկիզբ առած այս անկեղծ բարեկամությանը ինչպես մասնագիտական բնագավառում, այնպես էլ՝ անձնական հարաբերություններում, շարունակվի եւ խորանա, որպեսզի բազմանան մեր ժողովուրդներին իրար միացնող նորանոր կամուրջները:

**ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի համակարգող***

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՐՑՆՈՒՄ Է ՄԵԿԸ, ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ



***Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:***

**ՀԱՐՑ.** *Ելնելով քաղաքացիական իրավունքի նորմերից՝ ի՞նչ են նախատեսում պարտավորեցնող պայմանավորվածությունները, եւ ինչպիսի՞ք կարող են դրանք լինել:*

**Վ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

*Թբիլիսի*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Պարտավորեցնող պայմանավորվածությունների կատեգորիային են պատկանում այն պայմանավորվածությունները, որոնց միջոցով անձի վրա դրվում է պարտավորություն այլ անձի նկատմամբ որեւէ գործ կատարելու կամ որեւէ գործողությունից խուսափելու հարցով: Անձը, որը կատարելու է ստանձնած պարտավորությունը, պարտավոր է այն անվերապահորեն իրականացնել, իսկ անձը, որի նկատմամբ ստանձնված է պարտավորությունը, վավերացնելու է պարտավորության կատարման փաստը: Պարտավորեցնող պայմանավորվածությունը կարող է լինել ինչպես միակողմանի (հանրային պարտավորություն), այնպես էլ՝ երկկողմ (մեծ մասամբ պայմանագրի տեսքով):

**ՀԱՐՑ.** *Իրավական տեսանկյունից, ո՞րն է համարվում միակողմանի պայմանավորվածություն, եւ ե՞րբ այն կարելի է համարել հիմնական:*

**Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*Ծալկա*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Այն պայմանավորվածությունը, որը հիմնական համարելու համար պահանջվում է միայն ցանկություն, քաղաքացիական իրավունքում համարվում է միակողմանի պայմանավորվածություն: Կամքի դրսեւորումը, որն ընդունվում է երկրորդ կողմից, հիմնական է համարվում այն պահից, երբ հանդիպակաց կողմը համաձայնում է դրա հետ:

**ՀԱՐՑ.** *Որքանո՞վ տեղեկացված եմ, պայմանավարծությունները լինում են ցուցադրական եւ բացառիկ: Ի՞նչն է դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունը:*

**Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Ախալքալաքի*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ցուցադրական է համարվում այն պայմանավորվածությունը, որի դեպքում, երբ կողմերը պայմանավորվում են գործին ընթացք չտալ: Նման կատեգորիայի պայմանավորվածությունների յուրահատկությունը նրանում է, որ այն ձեւակերպվում է փոխպայմանավորվածությամբ եւ հետապնդում է երրորդ անձին թյուրիմացության մեջ գցելու նպատակ: Ինչ վերաբերում է բացառիկ պայմանավորվածություններին, ապա դրանց նպատակն այլ պայմանավորվածությունների քողարկումն է, որոնց իրականացմանը կողմերն իրականում ձեռնամուխ են եղել:

**ՀԱՐՑ.** *Օրենքի համաձայն, ի՞նչ իրավունքներ են վերապահվում տուժալին այն դեպքում, երբ նա դարձել է կնքած պայմանավորվածության զոհը: Նման դեպքերում, վերապահվո՞ւմ են, արդյոք, փոխհատուցման հնարավորությունները:*

**Ռ.ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ**

*Նինոծմինդա*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Կեղծիքի դեպքում, տուժյալ կողմն իրավասու է պահանջել պայմանավորվածության անվավեր ճանաչում եւ վնասի փոխհատուցում: Նշանակալից է, որ խաբեությամբ կնքված պայմանավորվածության անվավեր ճանաչման համար նշանակություն չունի, թե պայմանավորվածությունը վերաբերում է առանձին որեւէ առարկային կամ պայմանավորվածությանը, որը կարող էր ազդեցություն գործել պայմանավորվող կողմերի վրա: Խաբեությամբ կնքված պայմանավորվածության փոփոխման իրավունքի ժամկետը սահմանված է մեկ տարի, իսկ սխալմամբ կնքված պայմանավորվածության ժամկետը սահմանափակված է ընդամենը մեկ ամսով:

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ✵ ²ÚÈ²¼²Ü ✵ ÊàðÐàôð¸Ü°ð

Î°Ü¸²Ü²Î°ðä°ðÆ ¸²ê²Î²ð¶àôØ

## ԻՆՉՊԵՍ Է ԾԱԳԵԼ ՉԻՆԱԿԱՆ ՀՈՐՈՍԿՈՊԸ



***Վերջին տասնամյակներում, ի տարբերություն խորհրդային ժամանակների, սովորական երեւույթ է դարձել ամեն տարի առնչվել կենդանակերպի որեւէ նշանի հետ: Հետաքրքիր է, ինչպե՞ս է ծագել նման դասակարգումը:***

***Ս. Մարգարյան***

***Ախալքալաքի***

Չինական օրացույցն արդեն 47 դարի պատմություն ունի եւ լայնորեն գործածվում է Արեւելյան Ասիայի երկրներում: Սակայն, դրա հանդեպ հետաքրքրություն են ցուցաբերում նաեւ եվրոպացիները: Այս օրացույցի ծագման մասին տարբեր առասպելներ կան: Ըստ ավանդազրույցներից մեկի, Բուդդան, իր մահկանացուն կնքելուց առաջ, կանչում է բոլոր կենդանիներին, սակայն նրանցից միայն 12-ն են գալիս: Հավատարմության համար ուսուցիչը նրանցից յուրաքանչյուրին լուսնային մեկ տարվա հովանավոր է կարգում` ըստ այն հերթականության, որով նրանք հանդիպման էին եկել: Առաջինն Առնետն էր եկել, ապա` Ցուլը, Վագրը, Ճագարը, Վիշապը, Օձը, Ձին, Այծը, Կապիկը, Աքլորը, Շունը եւ Վարազը: Եվ այս հերթականությունն արդեն բազում դարեր չի խախտվում: Կենդանիներից բացի, յուրաքանչյուր տարին խորհրդանշորեն կապվում է նաեւ հինգ տարերքներից մեկի հետ (Փայտ, Կրակ, Հող, Մետաղ, Ջուր):

2015 թվականի հովանավորն Այծն է (Ոչխարը): Այս կենդանին համառ է, ակտիվ եւ նպատակասլաց: Նրան պետք չէ զայրացնել թեթեւամիտ որոշումներով: Նա փոփոխամիտ է եւ կարող է անակնկալներ մատուցել: Տարվա տարերքը Փայտն է, որը զարուն եւ առավոտ է խորհրդանշում: Այն կյանքի, գիտելիքի եւ ողջամտության ակունքն է: Տարին, ըստ Չինական օրացույցի, սկսվում է 2015 թվականի փետրվարի 19-ին եւ ավարտվում 2016 թվականի փետրվարի 7-ին: Աստղագետները խոստանում են, որ այն խաղաղ, բարեբեր ու անվտանգ կլինի նրանց համար, ովքեր սիրում են վաստակել սեփական քրտինքով:

¼²ðØ²Ü²ÈÆ Æð²Î²ÜàôÂÚàôÜ

## «ԻՍԿ ՀԻՄԱ ԾԻՏԻԿԸ ԴՈՒՐՍ ԿԹՌՉԻ»



***Մեծերից հաճախ եմ լսել. տարիներ առաջ լուսանկարվելիս, լուսանկարիչը, առանձնապես երեխաների ուշադրությունը գրավելու համար, ասում էր. «Հիմա ծիտիկը դուրս կթռչի»: Այդպե՞ս է արդյոք, եւ եթե` այո, ապա ի՞նչն է եղել նման արտահայտության պատճառը:***

***Վ.Գրիգորյան***

***Թբիլիսի***

Իսկ գիտե՞ք, որ այն ծիտիկը, որի մասին նկարվելու պահին երեխաներին հիշեցնում են լուսանկարիչները` մատնացույց անելով օբյեկտիվը, իսկապես գոյություն է ունեցել: Այդ հիմա է, որ լսելով` «Իսկ հիմա ծիտիկը դուրս կթռչի» բառերը` փոքրիկներն ապարդյուն են սպասում անտեսանելի փետրավորի դուրս թռչելուն: Ի դեպ, լուսանկարիչներն իրենք էլ պատկերացում չունեն, այդպիսի ծիտիկ եղե՞լ է, թե՞ ոչ: Պարզվում է` եղել է:

20-րդ դարի սկզբին, երբ տներում մոդայիկ էր դարձել լուսանկարների ալբոմ ունենալը, լուսանկար ստանալու բուն գործընթացը դեռեւս հեռու էր կատարելությունից: Նկարվելիս պետք էր մի որոշ ժամանակ չշնչել, հակառակ դեպքում, նկարը չէր ստացվի: Եթե մեծերը հնազանդորեն մի քանի վայրկյան գամվում էին պարտադրված դիրքում, ապա երեխաներին դա շատ դժվարությամբ էր հաջողվում: Եվ այսպես, անցած դարի 20-ական թվականներին հնարամիտ լուսանկարիչները երեխաների ուշադրությունն սկսեցին գրավել օբյեկտիվի մոտ տեղադրվող արույրե թռչնակի վրա: Խաղալիքը ոչ միայն պսպղում էր, այլեւ սուլոց էր արձակում, որը նման էր իսկական թռչունների երգեցողությանը:

Այնպես որ, գտեք այն ժամանակների որեւէ հին լուսանկար եւ դիտեք. դուք նայում եք ձեր պապիկի հորը` կարճ շալվարով, իսկ նա` ծիտիկին...

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

## ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Սուրճի եւ ծխախոտի համադրումն անվնաս չէ: Հույն գիտնականները կես տարի հետեւել են մարդկանց առողջական վիճակին եւ եզրակացրել, որ կոֆեինն ու նիկոտինն արյան մեջ ասես մրցում են իրար հետ, թե իրենցից որ մեկն է ավելի վնասակար սրտի եւ անոթների համար: Ի դեպ, միաժամանակյա օգտագործման դեպքում, դրանց վնասակար ազդեցությունները ոչ թե պարզապես գումարվում են, այլ բազմապատկվում: Այնպես որ, երկու չարիքից գոնե պետք է ընտրել մեկը` կա'մ սուրճը, կա'մ ծխախոտը:

Գերմանացի գիտնականները հաստատել են, որ սննդի մեջ միս օգտագործողներն ավելի հաճախ են քաղցկեղով հիվանդանում: Բայց պատճառը ոչ թե հենց մսի մեջ է, այլ նիտրիտների եւ նիտրատների, որոնք պահպանման նպատակով օգտագործվում են երշիկեղենի ու նրբերշիկների մշակման ժամանակ: Վնասակար են նաեւ այն հորմոններն ու դեղերը, որոնցով կերակրում են կովերին ու հավերին: Իսկ առանց հավելումների թարմ միսը միայն օգտակար է: Եզրակացություն. գնեք միայն ստուգված եւ թարմ միս:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Որոշումներ մենք կայացնում ենք գրեթե ամեն օր: Ոմանք առանց որեւէ դժվարության, առանց տատանվելու կարողանում են արագ որոշումներ կայացնել, իսկ ոմանց համար, նույնիսկ տարրական հարցերում, այն մեծ տանջանք է ու փորձություն:*

«Լինե՞լ, թե՞ չլինել» շեքսպիրյան հայտնի խոսքն առավելապես բնութագրում է այն մարդու հոգեվիճակը, ով տատանվում է որոշումներ կայացնելիս: Որոշումներ կայացնելու դժվարությունը պայմանավորված է մի շարք խնդիրներով, որոնց եւ կանդրադառնանք: Երբ մարդը պետք է որոշում կայացնի, սակայն ոչ մի կերպ չի կարողանում, նա խուճապի է մատնվում, անհարմար վիճակի մեջ հայտնվում, ամաչում է, մեղքի զգացում ունենում եւ ժամանակ է ձգում ու, հնարավորության դեպքում, ուշացնում որոշում կայացնելը: Այդ զգացումները խորանում են եւ կարող են նույնիսկ զայրույթի վերածվել: Որքան մարդը շատ է տատանվում, այնքան համոզվում է, որ պետք չէ որոշում կայացնել, եւ որ ամենալավ տարբերակը նահանջելն է: Նա շարունակում է սպասել, ձգձգել ժամանակը, որպեսզի ինչ-որ մեկը վերջապես իր փոխարեն որոշում կայացնի: Մարդը չի գիտակցում իր վարքի պատճառները, որոնք իրականում պաշտպանական ֆունկցիա են կատարում: Որոշում կայացնելուց նահանջելը հնարավորություն է տալիս նրան խուսափել պատասխանատվությունից:

Անիմաստ է այդ ժամանակ մարդուն խորհուրդներ տալը: Նման մարդկանց փոխարեն, որոշումներ մի կայացրեք, քանի որ այդպես դուք ամբողջ պատասխանատվությունը ձեզ վրա եք վերցնում: Պետք չէ նաեւ մեղադրել. դա ավելի կխորացնի սեփական անձի նկատմամբ բացասական վերաբերմունքը, անինքնավստահությունը: Օգնեք հասկանալ, թե ինչն է նրան խանգարում: Բացատրեք, թե ինչ կարող է լինել, եթե նա այդպես էլ չսովորի որոշումներ կայացնել, քանի որ յուրաքանչյուր մարդ ինքը պետք է որոշի` ինչ անել:

### ՍԽԱԼՎԵԼՈՒ ՎԱԽ

Նա, ով դժվարանում է որոշում կայացնել, տանջվում է անվստահության զգացումից, վախենում է սխալվել: Այս խնդրի արմատները կարելի է գտնել մանկության տարիներին, երբ երեխայի համար սովորական է դառնում, որ իր փոխարեն որոշումներ են կայացնում ուրիշները` ծնողները, ընկերները կամ այլ հեղինակավոր անձինք: Նման երեխաների ծնողները հիմնականում ավտորիտար, իշխող, խիստ դաստիարակության ոճի կողմնակից են: Նրանք անընդհատ գնահատում են երեխայի վարքը, քննադատում են, նրա փոխարեն որոշումներ կայացնում, ինչն էլ նպաստում է, որ երեխան սկսի կասկածի տակ առնել իր հնարավորությունները. նա վախենում է սխալներ թույլ տալ եւ խուսափում է որոշումներ կայացնել: Երեխան հույսը դնում է ուրիշների վրա: Չսխալվելու միակ տարբերակը` ընդհանրապես ոչինչ չանելն է, սակայն դա հարցի լուծում չէ: Իրականում չկան ճիշտ եւ սխալ որոշումներ: Բոլոր որոշումներն էլ ճիշտ են, եթե ուղղված են իրական նպատակի:



### ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Երբեմն այնպես է պատահում, որ նույնիսկ ամենահնարամիտներն էլ են դժվարանում ընտրություն կատարել: Մարդը դժվարանում է, քանի որ ընտրության տարբերակները շատ են եւ մեկը մյուսից` գայթակղիչ: Ավելի հեշտ է ընտրություն կատարել, երբ ինչ-որ բան ընտրում ես «պարզապես ինձ դուր է գալիս» սկզբունքով, այլ ոչ թե` «այն, ինձ անհրաժե՞շտ է, թե՞ ոչ», «օգտակա՞ր է, ինձ համապատասխանո՞ւմ է, թե՞ ոչ»: Շատ հաճախ, ընտրություն չկայացնելը կարող է պայմանավորված լինել նրանով, որ մարդը ենթագիտակցաբար զգում է. ընտրված տարբերակներից ոչ մեկն էլ միգուցե լիարժեք չգոհացնի իրեն:

### Ի՞ՆՉ ԱՆԵԼ

**Մի' վախեցեք, ռիսկի դիմեք**

Մարտահրավեր նետեք ձեզ, միջավայրին, սովորեք հաճույք ստանալ այդ ամենից: Ձեր կայացրած յուրաքանչյուր որոշում համարեք հաղթանակ սեփական անձի նկատմամբ, յուրաքանչյուր հաղթանակով ամրապնդեք ձեր ինքնավստահությունը: Ընտրեք խիզախ, ինքնավստահ մարդ, ով կարող է ձեզ համար օրինակ լինել` ձեր մեջ զարգացնելու այդ որակները: Ընտրության առջեւ կանգնելով` պատկերացրեք, թե նա ինչպես կվարվեր այդ իրավիճակում:

Փոխեք ձեր վերաբերմունքը ձեր գործողությունների նկատմամբ:

Դուք սխալվում եք` կարծելով, որ ի վիճակի չեք որոշումներ կայացնել: Կյանքը մեզ անընդհատ ընտրության առջեւ է կանգնեցնում, եւ միշտ ուրիշի հույսին մնալն այնքան էլ արդյունավետ չէ: Ուշադիր եղեք այն որոշումների նկատմամբ, որոնք դուք եք կայացրել, եւ ձեր յուրաքանչյուր հաջողությունը կոգեւորի ձեզ:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդու համար անունն ավելի թանկ է, քան կյանքը, եւ դրա համար էլ մարդ պիտի աշխատի նախ իր անվան, ապա` կյանքի համար:

***ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ***
***(1825-1912)***
***Հայ դրամատուրգ***

Ինչի՞ նման է, որ մարդը ապրի եւ ոչինչ չանի աշխարհի համար:

***ՆԻԿՈԼՈԶ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ***
***(1817-1845)***
***Վրաց բանաստեղծ***

Ավելի բարի եղեք բոլոր այն պահերին, երբ դա հնարավոր է: Իսկ դա միշտ է հնարավոր:

***Բուդդայական ասացվածք***

Եթե ուզում ես ընկերներիդ ծառայություն մատուցել, ապա պետք չէ լռության մատնել նրանց թերությունները:

***ԴԵԲԻԴՈՒՐ***
***(1847-1917)***
***Ֆրանսիացի պատմաբան***

Ապրիր մարդկանց հետ այնպես, որ քո բարեկամները չարակամներ չդառնան, իսկ չարակամները` բարեկամներ:

***ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ***
***(մ.թ.ա.570-մ.թ.ա.490)***
***Անտիկ մաթեմատիկոս եւ փիլիսոփա***

Մարդկանց մեծամասնությունն իր կյանքի առաջին կեսն անց է կացնում այնպես, որպեսզի փչացնի երկրորդը:

***ԼԱԲՐՅՈՒԵՐ***
***(1645-1696)***
***Ֆրանսիացի հայտնի բարոյախոս***

Ոչ թե մեռնելուց պետք է վախենալ, այլ փուչ ապրելուց:

***ԲԵՐՏՈԼԴ ԲՐԵԽՏ***
***(1898-1956)***
***Գերմանացի դրամատուրգ***

Ժամանակ մի կորցրեք այն մարդկանց վրա, ովքեր ձեզ համար ժամանակ չունեն:

***Գ.ԲԱԼԱՅԱՆ***
***«Վրաստանի» ընթերցող***

²Ü°Î¸àîÜ°ð

** Փոքրիկ աղջիկը թերթում է ընտանեկան ալբոմը.*

*- Մայրի'կ, ո՞վ է այս երիտասարդ, գեղեցիկ քեռին, որ քեզ հետ նստած է լողափում:*

*Մայրիկը խոր հոգոց է քաշում ու պատասխանում.*

*- Այդ լուսանկարն արդեն 20 տարեկան է: Դա քո հայրիկն է:*

*- Ա՜յ քեզ բան: Այդ դեպքում ո՞վ է այն ճաղատ քեռին, որ մեզ հետ է ապրում:*

** Տղամարդը տուն է գալիս` կոնֆետների մի մեծ փաթեթ ձեռքին եւ ասում է իր չորս փոքրիկներին.*

*- Ով միշտ լսում է մայրիկին, երբեք չի հակաճառում, կատարում է նրա բոլոր խնդրանքները, հենց նրան կհասնեն այս կոնֆետները:*

*Երեխաները միաձայն գոչում են.*

*- Քեզ, հայրի'կ:*

** - Չեմ հասկանում, ինչո՞ւ է այս ռեստորանը «Ավազակային» կոչվում:*

*- Հաշիվը կբերեն, կհասկանաք:*

** Ծննդատանը բուժքույրը երիտասարդ հայրիկին է փոխանցում երկու նորածիններին եւ հարցնում.*

*- Ձեզ չի՞ վախեցնում այն, որ մեկից ավելի փոքրիկներ են ծնվել:*

*- Ո'չ, ի՞նչ եք ասում,- շփոթված պատասխանում է տղամարդը:*

*- Հրաշալի է, ուրեմն նրանց գրկեք, իսկ ես գնամ մյուսներին բերելու:*

# ԸՆԴՈՒՆՎԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստի ավարտից հետո, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանձնաժողովի անդամների եւ ընդլայնված նիստի մասնակիցների հետ այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղկեպսակ դրեց Հայոց Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին եւ հարգանքի տուրք մատուցեց անմեղ զոհերի հիշատակին:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում կայացավ նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագրի հրապարակման արարողությունը: Հռչակագիրը միաձայն ընդունվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստում: Փաստաթուղթն ընթերցեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ, ի կատարումն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի որոշման, հռչակագրի մայր օրինակը ի պահ հանձնեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին: Հռչակագրի մեկ օրինակը կուղարկվի Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, մեկ օրինակը կհանձնվի Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ:



Միջոցառումներին, պետական հանձնաժողովի անդամներից բացի, մասնակցում էին տարածաշրջանային հանձնախմբերի ներկայացուցիչները, փորձագետներ, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչներ, Հայաստանի Առաքելական Սուրբ եկեղեցու թեմերի առաջնորդներ: Միջացառումներին Վրաստանը ներկայացնում էին Վրաստանի տարածաշրջանային հանձնախմբի ղեկավար, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, հանձնախմբի անդամ, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

*Ստորեւ ներկայացնում ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագիրը:*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ՝

- արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,

- հենվելով 1990 թվականի օգոստոսի 23-ի՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրության վրա,

- վկայակոչելով ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որի համաձայն, «մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության եւ հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության եւ խաղաղության հիմքն է»,

- ղեկավարվելով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձեւի, 1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, 1968 թվականի նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաեւ 1966 թվականի դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի եւ մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով ու դրույթներով,

- հաշվի առնելով, որ, «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու եւ պատժելու մասին» կոնվենցիան ընդունելիս, ՄԱԿ-ը հատուկ կարեւորել է այդ հանցատեսակի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը,

- շեշտելով ցեղասպանության հանցակազմում պարունակվող արարքների համար անպատիժ մնալու անթույլատրելիությունն ու այդ հանցագործության վաղեմության ժամկետ չունենալու հանգամանքը,

- դատապարտելով 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայության ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաեւ ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետեւանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն եւ նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք,

- համարելով նաեւ 1919-1921 թվականներին Օսմանյան ռազմական արտակարգ ատյանների կողմից «Իրավական եւ մարդկային օրենքների դեմ» այդ ծանր ոճրի ուղղությամբ կայացված դատավճիռները եղելության իրավական գնահատական,

- արժեւորելով 1915 թվականին միջազգային հանրության կողմից Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դեմ իրականացված ծանրագույն հանցագործությունը պատմության մեջ առաջին անգամ որպես «մարդկության եւ քաղաքակրթության դեմ իրականացված հանցագործություն» որակումը եւ օսմանյան իշխանություններին պատասխանատվության կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպես նաեւ 1920 թվականի օգոստոսի 10-ի Սեւրի հաշտության պայմանագրի եւ 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը եւ նշանակությունը Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցում.

1. Ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը եւ երախտագիտությամբ խոնարհվում կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ եւ վերապրած հերոսների առջեւ:

2. Վերահաստատում է Հայաստանի եւ հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման եւ պատմական արդարության հաստատման համար:

3. Շնորհակալություն է հայտնում այն պետություններին, միջազգային, կրոնական եւ հասարակական կազմակերպություններին, որոնք քաղաքական խիզախություն ունեցան ճանաչելու եւ դատապարտելու Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված սոսկալի ոճրագործություն, եւ այսօր էլ շարունակում են այդ ուղղությամբ իրավական քայլեր ձեռնարկել, նաեւ կանխել ժխտողականության վտանգավոր դրսեւորումները:

4. Երախտագիտություն է հայտնում այն ազգերին, կառույցներին եւ անհատներին, ովքեր, հաճախ իրենց վտանգելով, մարդասիրական տարաբնույթ օգնություն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջեւ կանգնած բազմաթիվ հայերի, ապահով եւ խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանությունից վերապրած հայության համար՝ մեծ թափ հաղորդելով որբախնամ գործունեությանը եւ միջազգային հայասիրական շարժմանը:

5. Դիմում է ՄԱԿ-ի անդամ պետություններին, միջազգային կազմակերպություններին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային եւ կրոնական պատկանելությունից, միավորել իրենց ջանքերը պատմական արդարությունը վերականգնելու եւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար:

6. Արտահայտում է Հայաստանի եւ հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու եւ ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային եւ համազգային իրավունքների ու օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը եւ միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպես Հայոց ցեղասպանության, Մեծ եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետեւանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչել եւ դատապարտել Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը եւ մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի զոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվել սեփական պատմության ու հիշողության հետ՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման եւ հարաբերականացման քաղաքականությունից:

Զորակցում է Թուրքիայի քաղաքացիական հասարակության այն հատվածին, որի ներկայացուցիչներն այսօր արդեն համարձակություն են դրսեւորում այդ հարցում՝ ի հակադրություն իշխանությունների պաշտոնական դիրքորոշման:

9. Հույս է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը եւ դատապարտումը կարեւոր մեկնակետ կդառնան հայ եւ թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար:

10. Հպարտությամբ է արձանագրում, որ ցեղասպանությունից վերապրած հայ ժողովուրդը վերջին հարյուրամյակի ընթացքում՝

- դրսեւորեց անկոտրում կամք ու ազգային ինքնագիտակցություն, վերականգնեց դարեր առաջ կորցրած ինքնիշխան պետականությունը,

- պահպանեց եւ զարգացրեց ազգային արժեքները, հասավ ազգային մշակույթի, գիտության եւ կրթության վերածննդի՝ ուրույն ներդրում ունենալով համաշխարհային ժառանգության զարգացման գործում,

- ստեղծեց Հայկական սփյուռքի հոգեւոր եւ աշխարհիկ կառույցների հզոր եւ արդյունավետ ցանց, ինչը նպաստեց աշխարհասփյուռ հայ համայնքներում հայապահպանության, հայի՝ հարգանք եւ համակրանք վայելող կերպարի կերտմանը, հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությանը,

- համազգային գործակցության եւ հայրենադարձության ընդարձակ ծրագրով համախմբեց ու վերստեղծեց ցեղասպանության հետեւանքով վերացման վտանգի առջեւ հայտնված ազգային գենոֆոնդը,

- Առաջին եւ Երկրորդ աշխարհամարտերում բերեց իր արժանի ներդրումը միջազգային անվտանգության եւ խաղաղության հաստատման գործում, փառավոր հաղթանակներ տարավ Սարդարապատի ու Արցախի հերոսամարտերում:

11. Դիտարկում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը որպես կարեւոր հանգրվան պատմական արդարության համար մղվող պայքարը «Հիշում եմ եւ պահանջում» կարգախոսով շարունակելու գործընթացում:

12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասեր, գիտակից եւ ույսալ կեցվածքով պաշտպան կանգնել հայրենի սրբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայել հանուն՝

- առավել հզոր Հայրենիքի՝ ազատ եւ ժողովրդավար Հայաստանի Հանրապետության,

- անկախ Արցախի առաջընթացի ու զորացման,

- աշխարհասփյուռ հայության գործուն համախմբման,

- համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման:

## ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԸ 23 ՏԱՐԵԿԱՆ Է



*Հայկական տոնացույցի ամենակարեւոր եւ ամենապատասխանատու օրերից մեկն է հունվարի 28-ը: Սա տոն է, որ հպարտությամբ են նշում թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում, սա օր է, որ հայ ժողովրդին համոզեց, որ պայքարը չի ավարտվել ու նոր հաղթանակներն առջեւում են: Հունվարի 28-ը Հայկական բանակի կազմավորման տարեդարձն է: Բանակի օրվա առթիվ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք ու Ամենայն Հայոց կաթողիկոսի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հետ եւ Հայաստանի բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն եւ հարգանքի տուրք մատուցեց իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին: Հայաստանի պետական այրերը ծաղիկներ դրեցին սպարապետ Վազգեն Սարգսյանի եւ զորավար Անդրանիկի շիրիմներին, ինչպես նաեւ Արցախյան ազատամարտի հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձանին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԶԳԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ



*Հունվարի 26-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք ու Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հետ: Հանդիպմանը Հայաստանի նախագահը, Վեհափառ Հայրապետը եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի՝ 2015 թվականի անդրանիկ նիստից առաջ, քննարկել են պետական հանձնաժողովի աշխատանքները եւ միջազգային ու միջեկեղեցական հարթակներում, սփյուռքում Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից այդ աշխատանքներին մասնակցությունը: Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ պետություն-եկեղեցի հարաբերություններին եւ սերտ համագործակցությանը, ազգային-եկեղեցական կյանքի կարեւորագույն խնդիրներին ու առկա մարտահրավերներին:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՀՈՒՆՎԱՐ



*31.01.2015. Երիտասարդների եւ սիրո բարեխոս Սուրբ Սարգիս Զորավարի հիշատակության օր*

Ամենայն Հայոց Գարեգին Բ հայրապետի տնօրինությամբ, Սուրբ Սարգիս Զորավարի տոնը հռչակվել է երիտասարդների օրհնության օր: Սուրբ Սարգիս Զորավարը ամենասիրված սրբերից է: Իր որդու՝ Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նա նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի, եւ պատահական չէ, որ Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը նրա մասունքները բերում է Կարբի (Աշտարակի շրջան)՝ տեղում կառուցելով երանելու անունը կրող եկեղեցի:

Սուրբ Սարգիս Զորավարի տոնը Հայաստանում ընդունված է նշել ոչ միայն եկեղեցական ծեսով, աղոթքով, այլեւ ժողովրդական սովորույթներով, որը մեզանում նվիրական ավանդություն է: Սուրբ Սարգիս Զորավարը երիտասարդների արագահաս բարեխոսն է: Նրա միջնորդությամբ հրաշքներ են տեղի ունենում:

Սուրբ Սարգսի տոնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց փեսացուի կամ հարսնացուի երազահայտնությունը: Այդ օրվա հիշատակելի սովորություններից է փոխինդով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին եւ սպասել Սուրբ Սարգիս Զորավարի ձիու պայտի հետքին: Ըստ ավանդույթի, Սուրբ Սարգիսը պետք է հրեշտակների ուղեկցությամբ անցնի, եւ ում մատուցարանի մեջ դրված ալյուրի կամ փոխինդի մեջ թողնի մաքրություն, անաղարտություն խորհրդանշող իր սպիտակ ձիու պայտի հետքը, այդ տարի կիրականանա տվյալ հավատացյալի երազանքը: Սիրահար երիտասարդները տոնի առթիվ միմյանց բացիկներ եւ քաղցրավենիք են նվիրում: Տոնի օրը Սուրբ Սարգիս Զորավարի անունը կրող եկեղեցիներում մատուցվում է Սուրբ պատարագ, որից հետո կատարվում է երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգսի տոնին նախորդում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի կողմից հաստատված առաջավորաց պահքը: Պահքը տեւում է հինգ օր:

ՄԱՐԶԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍ

# ԹԲԻԼԻՍԻՆ ԿԸՆԴՈՒՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ




*2015 թվականի հուլիսի 19-24-ը Թբիլիսիում կկայանա Եվրոպայի պատանեկան օլիմպիական ամառային 13-րդ փառատոնը:*

Բոլոր մարզահանգրվանները, նրանց թվում՝ օլիմպիական ավանը, կառուցվում են հատուկ այդ փառատոնի անցկացման համար: Ծրագրում ընդգրկված է 9 մարզաձեւ (ծմեռայինում՝ ութ մարզաձեւ) բասկետբոլ, հանդբոլ, վոլեյբոլ, ձյուդո, ատլետիկա, լող, սպորտային մարմնամարզություն, հեծանվասպորտ եւ թենիս: Ակնկալվում է եվրոպական 49 երկրի 13-18 տարեկան ավելի քան 4 հազար պատվիրակների մասնակցությունը: Փառատոները, մարզականից բացի, մեծ դեր են կատարում մասնակիցների կրթական, միմյանց հետ շփվել-ծանոթանալու, օլիմպիզմի ոգին ու գաղափարներն ընկալելու համար: Միջոցառումներն անցկացվում են ՄՕԿ-ի հովանու ներքո: Համալիր այս մրցաշարը կազմակերպում է Եվրոպայի օլիմպիական կոմիտեն եւ լիովին համապատասխանում է օլիմպիական խարտիայի պահանջներին ու հինգ աշխարհամասում գործող մարզական ֆեդերացիաների կանոնադրություններին:

Ծրագրում ընդգկվում են միայն օլիմպիական մարզաձեւերը, եւ այն հաստատում է ԵՕԿ-ը: Ազգային օլիմպիական կոմիտեները բացառիկ իրավունք ունեն փառատոներում ներկայացնել իրենց երկրները:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

# ՀՈՒՇԱՐՁԱՆ ՕԹԱՐ ՄԵՂՎԻՆԵԹՈՒԽՈՒՑԵՍՈՒՆ

*Թբիլիսիում, «Ապրիլի 9-ի» (նախկին՝ Ալեքսանդրովսկի) այգում բացվեց վրաց ճանաչված դերասան, Վրաստանի, Խորհրդային Միության ժողովրդական արտիստ Օթար Մեղվինեթուխուցեսու հուշարձանը:*



Հուշարձանի բացման արարողությանը համաշխարհային մակարդակով դերասանի նշանակության մասին խոսեցին Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան, սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, հուշարձանի հեղինակ Լեւան Վարդոսանիձեն: Շնորհակալական խոսքով հանդես եկավ դերասանի այրի, Վրաստանի ժողովրդական արտիստուհի Գուրանդա Գաբունիան:

Բացման արարողությանը մասնակցեցին նաեւ Թբիլիսիի պետհայդրամայի թատրոնի դերասան Ռոբերտ Հովհաննիսյանը, երաժիշտ, գրող Արտեմ Գրիգորենցը, լուսանկարիչ Յուրի Մեչիտովը, նկարիչներ Գեւորգ Մանդյանը, Թենգիզ Միկոյանցը, մանկավարժ Գարրի Ղալամքարովը, ինժեներ Առլեն Մովսիսյանը:

*ԱՐՏԵՄ ԿԻՐԱԿՈԶՈՎ*

ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

# ԱՎԻԿ ԴԵՐԵՆՑԸ՝ ՎՐԱՑԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ






*Ծնունդով երեւանցի, ամերիկաբնակ բանաստեղծ Ավիկ Դերենցի (Դեյրմենջյան. ծնվ.1957թ.) «Կարոտաթախծի բույրը» եւ «Արդարության ուղին» ժողովածուները, որոնք լույս են ընծայվել Թբիլիսիում վրացերեն եւ ռուսերեն, հոյակապ նվեր են թբիլիսցի՝ քնարերգության սիրահարների համար:*

Գրքերի հրատարակությունը իրականացվել է Վրաստանի «Կամուրջ» գրական-մշակութային կազմակերպության նախաձեռնությամբ, նրա «Թարգմանական գրականության գրադարան» մատենաշարով, Թբիլիսիում:

Նախագծի եւ մատենաշարի հիմնադիր հեղինակն է կազմակերպության ղեկավար, բանաստեղծ, թարգմանիչ, «Վրաստան» թերթի բաժանորդագրության եւ առաքման ծառայության ղեկավար Անահիտ Բոստանջյանը: Նրան է պատկանում նաեւ «Կարոտաթախծի բույրը» ժողովածուի հայերենից վրացերեն թարգմանության հեղինակությունը:

Վրացերեն թարգմանության մեջ զետեղված են Ավիկ Դերենցի բանաստեղծությունները եւ «Աֆորիզմներ» շարքը:

«Հավատում եմ՝ այս թարգմանությունը պոեզիայի սիրահարների համար հիասքանչ նվեր է: Գրքի գլխավոր թեման սերն է, սերը՝ հայրենիքի եւ սիրած էակի հանդեպ, իսկ թախիծը՝ պոետի կարոտից է ծնվում...»,- գրում է գրքի խմբագիր, Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին:

Լիբանանահայ հայտնի բանաստեղծ, գրականագետ Սարգիս Կիրակոսյանը, գրքի «Անսահման կարոտի քաղցրաձայն գուսանը» առաջաբանում, Ավիկ Դերենց բանաստեղծի մասին իր գնահատականը ավարտում է հետեւյալ բնորոշմամբ. «Ավիկ Դերենցի գրական աշխարհը նոր է՝ ինչպես իր հոգու անեզր կարոտի ալիքներից բխած ջերմությունն ու գրավչությունը»:

Ավիկ Դերենցի ռուսերեն «Արդարության ուղին» ժողովածուի թարգմանության հեղինակը եւ խմբագիրը թբիլիսցի բանաստեղծ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» եւ «Արիոն» Պուշկինյան միությունների անդամ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան է: Նրա թարգմանությամբ ռուսերեն հնչած Ավիկ Դերենց բանաստեղծը նույնքան հոյակապ ու հմայիչ է, որքան բնագրում: Այդ երկու գրքերի հրատարակությունների նկարիչը Գիորգի Ավսաջանիշվիլին է, իսկ համակարգչային ձեւավորողը՝ Գիվի Խարաուլին:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

# ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 5.Դարի մեկ երկրորդ մասը: 9.Քաղաք Ուկրաինայում: 10.Մարգարե (անունը): 11.Ոչ գրավոր: 12.Հանգուստի ներսում: 14.Պարսիկ կայսր: 16.Եկեղեցու սպասավոր: 18.Դեղձի տեսակ: 20.Կերպար Նաիրի Զարյանի «Հացավան» վեպում: 21.Երեսի ջուրը չորացնելու միջոց: 25.Վրացու անուն: 26.Անկարգ, կարգը խախտող: 27.Յուրահատուկ, իրեն բնորոշ: 28.Շահան Շահնուր «...ն առանց երգի»: 29.Փախած, վտարանդի: 31.Քաջ, արի: 32.Պետք, պահանջ: 34.Լանջ, դոշ: 38.Քաղաք Հայաստանում: 39.Տեղանքի, բնակարանի մանրազնին ստուգում: 41.Թբիլիսահայ վաստակաշատ մանկավարժ, գրող (անունը): 42.Արեւմտահայ գրող, Մեծ եղեռնի զոհ Ռուբեն ...: 43.Ազգական, արյունակից: 44.Հայկական միրգ: 45.Երիտասարդ, տաղանդավոր դերասան ... Լեւոնյան: 46.Տարեդարձ, հոբելյան:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Ընդմիշտ, տեւական: 2.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան թատրոնի դերասանուհի Սեդիկ ...: 3.Հոմերոսի հերոսներից: 4.Ստույգ, հավաստի: 6.Երեւանում լույս տեսնող լրատվամիջոց: 7.Հայ նկարիչ ... Երեւանցի: 8.Հայաստանի գյուղերից: 13.Աշխատավարձ, վարձավճար: 14.Լիխտենշտեյնի մայրաքաղաքը: 15.Իրականություն, ստույգ եղածը: 17.Գյուղ Հայաստանում: 19.Լրատվամիջոց: 20.Հայաստանյան գինի: 22.Պանրի տեսակ: 23.Հագուստ, տարազ: 24.Խթան, ազդելու միջոց: 25.Մարզական գույք: 29.Ոչ կոշտ: 30.Ալ.Շիրվանզադեի ստեղծագործություններից: 31.Շաքարի կարեւոր բաղադրիչներից մեկը: 33.Քար նետող գործիք: 35.Սկսվեց ... նիստը: 36.Աչքի ընկնող, աչքի զարնող: 37.Մթնոլորտի մաս կազմող գազ: 39.Մթին, խավարչտին: 40.Եգիպտոսի պարգեւ գետը:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 7.Իվանովո: 8.Անանկ: 9.Մուն: 10.Ապինա: 13.Գումար: 18.Ռաջա: 19.Ճլպտուրիկ: 22.Շիրակ: 23.Աղավնի: 28.Անտիկ: 29.Տքնել: 32.Ձիր: 33.Լորդ: 34.Սատար: 37.Ենք: 39.Բյազ: 41.Ռուալ: 44.Ձեւում: 46.Ասյա: 47.Վալ: 49.Սիգ: 50.Մատռվակ: 52.Ցրիվ: 54.Սեսիա: 55.Մորու: 56.Գի: 57.Անհաս: 58.Լելա:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Նանի: 2.Նոնա: 3.Խոմի: 4.Հանգ: 5.Գամմա: 6.Ակիրա: 11.Պելշ: 12.Նոտր: 14.Ուռկան: 15.Աջանի: 16.Արկ: 17.Օկա: 20.Պիանո: 21.Ուայլդ: 24.Ղարս: 25.Վտիտ: 26.Իկեր: 27.Օձուն: 30.Քլեյ: 31.Երազ: 35.Ակռա: 36.Աբայ: 37.Ետեւ: 38.Քիմիկոս: 40.Ատլաս: 42.Ուստր: 43.Լատվիա: 44.Ջմռան: 45.Ուսամա: 48.Ամեն: 51.Տիա: 52.Ցուլ: 53.Իգլ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445